ԴԷՊԻ ՈՒՆԶԷՆ

Որոշեցինք մի քանի օրով գնալ Ունզէն, որ յայտնի է իր գեղանկար դիրքով եւ ծծմբի ջերմուկներով:

Սրա հռչակը տարածւած է ոչ միայն Ճապոնում, այլ եւ այն եւրոպացոց մէջ, որոնք ապրում են Հեռաւոր Արեւելքում: Այնտեղ գնում են բժշկւելու յօդացաւից, կամ պարզապէս շնչելու նրա լեռնային կազդուրիչ օդը:

Գալիս են նոյն իսկ Սիբիրից. թէեւ Ամուր գետի հովտում բաւական լաւ տեսակի հանքային ջրեր կան, բայց նրանք այնպէս երեսի վրա են թողւած եւ կեանքը այնքան թանգ է, որ հիւանդները գերադասում են երկար ճամփորդութեան դժւարութիւնները, անց են կենում հազարաւոր վերստեր, գետով ու ծովով, խոյս տալու համար Սիբիրի բուժարանների անյարմարութիւններից:

Ջինրիկիշաները հոտ էին առել մեր գնալու դիտաւորութեան մասին եւ մէկը միւսի ետեւից գալիս էին իրանց ծառայութիւնը առաջարկելու: Բոլոր պատրաստութիւնները վերջացնելով, մեր փոքրիկ խումբը նախաճաշից յետոյ բարձրացաւ իր կառքերը եւ առաջ շարժւեց:

Խառն ու աղմուկով անցնում ենք փողոցները: Մեզ հետ վազում են ուրիշ ջինրիկիշաներ, հրելով ետեւից մեր կառքերը ու խնդրելով իրանց օգնական վերցնել, մինչեւ որ, մեր անտարբերութիւնից յուսահատւած, մնում են ետ:

Իսկ մեր ջիները վազում էին մի առանձին ոգեւորութեամբ, թափահարելով ոտները իսկական ձիու պէս, կարծես ճամփի հեռաւորութիւնը նրանց աշխոյժ էր տւել: Կին ու մարդ, խանութ ու ապրանք արագ փախչում էին մեր աչքի տակով ու ճուլւում իրար, մութ ու անորոշ մի զանգւած դառնում: